Դրամական փոխանցումները որպես ԵԱՏՄ երկրների ինտեգրացիոն համագործակցության զարգացման գործոն

Ավագյան Մ.Ա.
Եվրոպական համալսարան (Հայաստան, Երևան)
misakav@rambler.ru

Վճռորոշ բառեր՝ տնտեսական ինտեգրում, դրամական փոխանցումներ, արտահանում, համախառն ներքին արդյունք, ավանդ, մանրածախ առևտուր, ներքին ներդրումներ, աշխատուժի միջազգային միգրացիա

Денежные переводы как фактор развития интеграционного сотрудничества стран ЕАЭС

Авагян М.А
Европейский университет (Армения, Ереван)
misakav@rambler.ru

Резюме: В экономическом развитии стран ЕАЭС важную роль играют денежные переводы, которые способствуют повышению конкурентных преимуществ некоторых стран-членов, развитию экономического сотрудничества, созданию основ для углубления процессов перераспределения финансовых и рабочих ресурсов в регионе. Денежные переводы в странах-членах ЕАЭС, имея системосоздающий характер, также являются уникальным фактором в развитии интеграционных процессов в рамках союза. В статье представлена географическая структура денежных переводов в рамках ЕАЭС, на основе сравнения с другими внешними источниками финансирования оценивается их значение в обеспечении экономического роста стран-членов. Была также проанализирована корреляция между денежными переводами и ВВП, потребления, внутренних инвестиций населения, депозитов физических лиц в коммерческих банках стран-членов союза.
Ключевые слова: экономическая интеграция, денежные переводы, экспорт, валовой внутренний продукт, депозиты, розничная торговля, внутренние инвестиции, международная трудовая миграция.

Remittances as a factor for development of integration cooperation of the EAEU countries

Avagyan M.A.
European University (Armenia, Yerevan)
misakav@rambler.ru

Abstract: Remittances has an important role in the economic development of the EAEU countries, which contributes to enhancing the competitive advantages of some member countries, developing economic cooperation, and creating the foundations for deepening the processes of redistributing financial and labor resources in the region. The remittances in the EAEU member countries, having a system-creating nature, are also a specific factor in the development of integration processes within the union. The article presents the geographical structure of remittances within the EAEU and assesses their importance in ensuring the economic growth of member countries on the basis of comparison with other external sources of financing. There are also analyzed the correlation between remittances and GDP, consumption, domestic investment of the population, deposits of individuals in commercial banks of the member countries.
Keywords: economic integration, remittances, export, gross domestic product, deposits, retail, domestic investment, international labor migration.

ԵԱՏՄ երկրների, հատկապես Հայաստանի, Բելառուսի և Ղրղզստանի տնտեսությունների կայունության պահպանման և զարգացման գործում մեծ նշանակություն ունեն դրամական փոխանցումները, որոնց ներհոսքը զգալիորեն գերազանցում է արտահոսքին: Ընդ որում, դրանց մեծ մասը հոսում է հենց ԵԱՏՄ երկրներից (գերակշիռ մասը՝ Ռուսաստանից), ինչը նշանակում է, որ այդ երկրների՝ դրամական փոխանցումներով պայմանավորված տնտեսական զարգացման տեմպերը մեծապես կախված են Ռուսաստանից, որտեղ աշխատանքային գործունեություն են իրականացնում ԵԱՏՄ անդամ մնացած երկրների

աշխատանքային միգրանտների զգալի մասը: Ճիշտ է, 2009թ. սկսված ֆինանսատնտեսական ճգնաժամի և հատկապես ռուս-ուկրաինական հակամարտության պատճառով Արևմուտքի կողմից Ռուսաստանի նկատմամբ կիրառվող տնտեսական պատժամիջոցների, էներգակիրների գների կտրուկ անկման արդյունքում ԵԱՏՄ ձևավորման հենց առաջին իսկ տարվա ընթացքում այդ երկրի տնտեսական զարգացումն էապես անկում ապրեց, որը բացասաբար ազդեց նաև ռուսական շուկայի հետ սերտորեն փոխկապված ԵԱՏՄ անդամ մյուս պետությունների տնտեսությունների վրա, այնուամենայնիվ, ԵԱՏՄ գործունեության սկիզբը նշանավորվեց անդամ մյուս երկրներից դեպի Ռուսաստան աշխատանքային միգրանտների ներհոսքի էական աճով, ինչը պայմանավորված էր այն հանգամանքով, որ համաձայն «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի դրույթների, ԵԱՏՄ անդամ պետությունների քաղաքացիները մեկ այլ անդամ պետության տարածքում կարող են աշխատանքային գործունեություն իրականացնել առանց աշխատանքի թույլտվության: Եվ հենց տարածաշրջանային խմբավորման շրջանակներում միջպետական միգրացիայի աճի շնորհիվ ԵԱՏՄ անդամ մնացած երկրները կարողացան թեթևացնել տնտեսության անկման հետևանքները՝ ի հաշիվ արտագնա աշխատողների կողմից կատարվող դրամական փոխանացումների աճի, ինչը մասամբ փոխհատուցեց նաև այդ ժամանակաշրջանում արտահանման ծավալների կրճատումից առաջացած կորուստները:

Ինչպես երևում է գծապատկեր 1-ից, ՀՆԱ-ի նկատմամբ դրամական փոխանցումների ծավալը մեծ է հատկապես Ղրղզստանում և Հայաստանում, որտեղ 2017թ. տվյալներով դրամական փոխանցումներ/ՀՆԱ հարաբերակցությունը կազմում է համապատասխանաբար 32.8% և 15.2%, իսկ Բելառուսը, Ռուսաստանը և Ղազախստանը տվյալ ցուցանիշների գծով ունեն բավականին ցածր մակարդակ (համապատասխանաբար՝ 1.2%, 1.7% և 1.3%): Նշենք, որ եթե 2012-2017թթ. Ժամանակահատվածում դրամական փոխանցումներ/ՀՆԱ հարաբերակցության մակարդակը Հայաստանում նվազել է՝ 2012թ. համեմատ՝ 2017թ. գրանցված 21.0%-ից իջնելով մոտ 5 տոկոսային կետով, ապա Ղրղզստանում, ընդհակառակը, այն շարունակում է մնալ գրեթե նույն մակարդակի վրա՝ նույնիսկ նախորդ տարվա համեմատ 2017թ. աճելով ևս 3.5 տոկոսային կետով: Արդյունքում Ղրղզստանում դրամական փոխանցումների ծավալը ներկայումս կազմում է ՀՆԱ-ի 1/3-ը, ինչը նշանակում է, որ այդ երկրում դրամական փոխանցումների նկատմամբ տնտեսության կախվածությունը դեռևս մնում է բավականին բարձր մակարդակի վրա: Առավել պատկերավոր ներկայացնելու համար նշենք, որ Ղրղզստանում տնային տնտեսությունների կողմից ստացվող դրամական փոխանցումների շնորհիվ այդ երկրի աղքատության մակարդակը կրճատվում է 6-7 տոկոսային կետով[1]:

Աղյուսակ 1-ից պարզորոշ է դառնում, որ դեպի ԵԱՏՄ որոշ երկրներ կատարվող դրամական փոխանցումների ընդհանուր ծավալի մեջ մեծ մասնաբաժին են կազմում կառույցի անդամ երկրներից ստացված դրամական փոխանցումները: Այսպես, Ղրղզստանում դրամական փոխանցումները գրեթե ամբողջությամբ (2017թ.՝ 98.2% կամ 2.44 մլրդ ԱՄՆ դոլար) ստացվում են ԵԱՏՄ երկրներից: Այդ երկրներից կատարված դրամական փոխանցումների տեսակարար կշիռը փոխանցումների ընդհանուր ծավալի մեջ զգալիորեն մեծ է նաև Հայաստանում (63.6% կամ 1.12 մլրդ ԱՄՆ դոլար) և Բելառուսում (48.2% կամ 0.3 մլրդ ԱՄՆ դոլար): ԵԱՏՄ երկրներից ստացված դրամական փոխանցումների առավել փոքր մասնաբաժին ունեն Ղազախստանը (27.1% կամ 0.76 մլրդ ԱՄՆ դոլար) և Ռուսաստանը (11.5% կամ 2.39 մլրդ ԱՄՆ դոլար): Ընդ որում, ԵԱՏՄ բոլոր երկրներում (բացառությամբ Ռուսաստանի) միության անդամ մյուս երկրներից ստացված դրամական փոխանցումների հիմնական մասը կատարվել են Ռուսաստանից (Ղրղզստանում՝ 99.8%, Բելառուսում՝ 98.2%, Հայաստանում՝ 95.3%, Ղազախստանում՝ 88.7%): Ինչ վերաբերում է Ռուսաստանին, ապա ԵԱՏՄ երկրներից դեպի այս երկիր ուղղվող դրամական փոխանցումների 61.5%-ը կատարվում է Ղազախստանից, 16.5%-ը՝

[1] Трудовая миграция, денежные переводы и человеческое развитие в странах Центральной Азии. (Серия аналитических записок по человеческому развитию для стран Центральной Азии). Eurasian Development Bank, UNDP, 2015, с. 65



Գծապատկեր 1. Դրամական փոխանցումներ/ՀՆԱ հարաբերակցությունը ԵԱՏՄ երկրներում 2012-2017թթ. (%) (Գծապատկերը կազմվել է http://www.eurasiancommission.org/ru/act/integr_i_makroec/dep_stat/fin_stat/time_series/Pages/transfers.aspx և http://www.eurasiancommission.org/ru/act/integr_i_makroec/dep_stat/econstat/Pages/national.aspx էլեկտրոնային կայքերի տվյալների հիման վրա)

Աղյուսակ 1.

Ֆիզիկական անձանց կողմից արտերկրից կատարված դրամական փոխանցումները դեպի ԵԱՏՄ երկրներ (աղյուսակը կազմվել է http://www.eurasiancommission.org/ru/act/integr_i_makroec/dep_stat/fin_stat/time_series/Pages/transfers.aspx էլեկտրոնային կայքի տվյալների հիման վրա) մլն ԱՄՆ դոլար

Մուտքի երկիր	Արտերկրից	2012	2013	2014	2015	2016	2017
դեպի Հայաստան	***Ընդամենը***	***2,234.1***	***2,302.3***	***2,123.6***	***1,631.7***	***1,532.9***	***1,756.5***
	այդ թվում՝ ԵԱՏՄ երկրներից	**1,673.0**	**1,758.0**	**1,591.1**	**1,052.3**	**918.5**	**1,117.2**
	որից՝						
	Բելառուսից	2.7	3.0	3.0	2.4	1.9	4.7
	Ղազախստանից	26.3	26.8	32.8	40.5	18.9	46.8
	Ղրղզստանից	0.0	0.4	0.5	0.8	0.8	0.6
	Ռուսաստանից	1,644.0	1,728.0	1,554.9	1,008.6	896.9	1,065.0
դեպի Բելառուս	***Ընդամենը***	***567.0***	***676.2***	***627.9***	***535.1***	***534.8***	***629.2***
	այդ թվում՝ ԵԱՏՄ երկրներից	**265.1**	**356.3**	**321.0**	**260.2**	**272.0**	**303.1**
	որից՝						
	Հայաստանից	-	-	0.8	0.4	0.2	0.1
	Ղազախստանից	10.5	9.1	8.7	7.5	4.0	4.9
	Ղրղզստանից	-	-	0.3	0.6	0.4	0.6
	Ռուսաստանից	254.6	347.2	311.2	251.7	267.4	297.5
դեպի Ղազախստան	***Ընդամենը***	***1,962.2***	***2,383.1***	***3,712.5***	***2,605.2***	***4,091.8***	***2,789.4***
	այդ թվում՝ ԵԱՏՄ երկրներից	**522.8**	**561.2**	**576.2**	**637.7**	**832.9**	**755.9**
	որից՝						
	Հայաստանից	0.8	1.7	2.5	2.7	4.7	4.2
	Բելառուսից	1.6	2.1	3.4	3.6	3.6	5.8
	Ղրղզստանից	29.3	26.2	34.1	41.6	54.1	75.6
	Ռուսաստանից	491.1	531.3	536.2	589.8	770.6	670.4

դեպի Ղրղզստան	***Ընդամենը***	***2,023.1***	***2,269.4***	***2,240.7***	***1,686.5***	***1,993.9***	***2,484.8***
	այդ թվում՝ ԵԱՏՄ երկրներից	**1,978.4**	**2,241.8**	**2,189.5**	**1,631.6**	**1,943.6**	**2,440.1**
	որից՝						
	Հայաստանից	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
	Բելառուսից	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
	Ղազախստանից	34.1	25.6	20.2	65.8	3.5	4.3
	Ռուսաստանից	1,944.3	2,216.2	2,169.3	1,565.7	1,940.1	2,435.8
դեպի Ռուսաստան	***Ընդամենը***	***14,056.0***	***19,797.1***	***19,199.6***	***18,575.4***	***18,362.7***	***20,786.0***
	այդ թվում՝ ԵԱՏՄ երկրներից	**1,754.0**	**2,088.7**	**2,303.5**	**2,319.6**	**1,833.9**	**2,389.0**
	որից՝						
	Հայաստանից	270.4	303.8	321.0	280.2	210.4	372.0
	Բելառուսից	94.1	131.7	170.1	121.6	120.7	155.0
	Ղազախստանից	1,107.4	1,240.9	1,387.4	1,596.0	1,175.5	1,469.0
	Ղրղզստանից	282.1	412.3	425.0	321.8	327.3	393.0

Աղյուսակ 2

Ֆիզիկական անձանց կողմից ԵԱՏՄ երկրներից կատարված դրամական փոխանցումները դեպի արտերկիր (աղյուսակը կազմվել է
http://www.eurasiancommission.org/ru/act/integr_i_makroec/dep_stat/fin_stat/time_series/Pages/transfers.aspx
էլեկտրոնային կայքի տվյալների հիման վրա)

մլն ԱՄՆ դոլար

Ելքի երկիր	Դեպի արտերկիր	*2012*	*2013*	*2014*	*2015*	*2016*	*2017*
Հայաստանից	**Ընդամենը**	**856.5**	**852.2**	**902.8**	**761.0**	**817.0**	**1,025.0**
	այդ թվում՝դեպի ԵԱՏՄ երկրներ	***255.5***	***240.6***	***265.2***	***292.0***	***341.3***	***382.1***
	որից՝դեպի						
	Բելառուս	2.9	2.6	3.9	2.8	3.0	2.9
	Ղազախստան	1.7	2.5	8.0	2.4	4.4	2.6
	Ղրղզստան	0.0	0.4	0.5	0.4	0.5	0.5
	Ռուսաստան	250.9	235.2	252.8	286.3	333.4	376.1
Բելառուսից	**Ընդամենը**	**371.7**	**569.3**	**531.1**	**372.3**	**274.3**	**293.3**
	այդ թվում՝դեպի ԵԱՏՄ երկրներ	***138.1***	***207.1***	***255.0***	***175.1***	***120.8***	***103.4***
	որից՝դեպի						
	Հայաստան	-	-	0.4	1.1	0.0	0.5
	Ղազախստան	1.1	2.0	1.4	1.3	0.7	1.2
	Ղրղզստան	-	-	0.0	0.0	0.1	0.3
	Ռուսաստան	137.0	205.1	253.3	172.7	120.0	101.4
Ղազախստանից	**Ընդամենը**	**8,982.9**	**9,657.7**	**11,503.5**	**8,863.4**	**7,979.9**	**7,337.7**
	այդ թվում՝դեպի ԵԱՏՄ երկրներ	***2,517.9***	***2,168.8***	***2,243.7***	***2,391.7***	***1,891.6***	***2,259.7***
	որից՝դեպի						
	Հայաստան	18.6	25.7	29.3	23.1	15.0	46.2
	Բելառուս	52.2	50.0	58.5	32.6	19.5	35.4
	Ղրղզստան	101.9	127.5	144.0	106.3	82.2	142.2
	Ռուսաստան	2,345.2	1,965.6	2,011.9	2,229.6	1,774.9	2,036.0

Ղրղզստանից	**Ընդամենը**	**256.3**	**364.9**	**430.2**	**339.9**	**361.4**	**456.7**
	այդ թվում՝ դեպի ԵԱՏՄ երկրներ	***244.9***	***352.9***	***406.5***	***327.7***	***355.9***	***451.6***
	որից՝ դեպի						
	Հայաստան	0.0	0.0	0.1	0.0	0.0	0.0
	Բելառուս	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
	Ղազախստան	0.7	0.7	1.1	11.3	1.4	3.1
	Ռուսաստան	244.3	352.3	405.3	316.4	354.5	448.5
Ռուսաստանից	**Ընդամենը**	**48,588.4**	**58,990.8**	**68,878.5**	**35,116.9**	**35,928.0**	**43,834.0**
	այդ թվում՝ դեպի ԵԱՏՄ երկրներ	***4,232.4***	***4,779.7***	***4,566.4***	***3,068.2***	***3,276.1***	***4,299.0***
	որից՝ դեպի						
	Հայաստան	1,602.4	1,715.1	1,550.0	940.6	711.5	1,065.0
	Բելառուս	309.8	399.0	377.6	230.2	262.8	314.0
	Ղազախստան	460.7	559.7	576.8	513.9	559.3	709.0
	Ղրղզստան	1,859.5	2,105.9	2,062.0	1,383.5	1,742.6	2,211.0

Ղրղզստանից, 15.6%-ը՝ Հայաստանից և 6.5%-ը՝ Բելառուսից:

Ուսումնասիրելով ԵԱՏՄ երկրներից դեպի տվյալ ինտեգրացիոն խմբավորման մնացած երկրներ կատարվող դրամական փոխանցումների կառուցվածքը՝ պետք է նշել, որ այդ երկրներից դեպի արտերկիր կատարվող դրամական փոխանցումների ընդհանուր ծավալի մեջ ԵԱՏՄ-ի մասնաբաժինը 2017թ. Ղրղզստանում կազմել է 98.9% (0.45 մլրդ ԱՄՆ դոլար), Հայաստանում՝ 37.3% (0.38 մլրդ ԱՄՆ դոլար), Բելառուսում՝ 35.3% (0.1 մլրդ ԱՄՆ դոլար), Ղազախստանում՝ 30.8% (2.26 մլրդ ԱՄՆ դոլար) և Ռուսաստանում՝ 9.8% (4.3 մլրդ ԱՄՆ դոլար): Հատկանշական է, որ ԵԱՏՄ բոլոր երկրներից (բացառությամբ Ռուսաստանի) նշված դրամական փոխանցումների ավելի քան 90%-ն ուղղվում է դեպի Ռուսաստան: Իսկ 2017թ. ընթացքում Ռուսաստանից դեպի ԵԱՏՄ երկրներ կատարված դրամական փոխանցումների ավելի քան կեսը՝ 51.4%-ը (2.21 մլրդ ԱՄՆ դոլար) բաժին է ընկել Ղրղզստանին, 24.8%-ը (1.07 մլրդ ԱՄՆ դոլար)՝ Հայաստանին, 16.5%-ը (0.71 մլրդ ԱՄՆ դոլար)՝ Ղազախստանին և ընդամենը 7.3%-ը (0.31 մլրդ ԱՄՆ դոլար)՝ Բելառուսին (աղյուսակ 2):

Այսպիսով, ԵԱՏՄ երկրների շարքում կառույցի մնացած անդամ երկրների հետ ֆիզիկական անձանց կողմից կատարված դրամական փոխանցումների բացասական հաշվեմնացորդ ունեն միայն Ղազախստանը և Ռուսաստանը, որոնց զուտ հոսքերը 2017թ. կազմել են համապատասխանաբար -1.5 մլրդ ԱՄՆ դոլար և -1.9 մլրդ ԱՄՆ դոլար: Իսկ դրական հաշվեմնացորդ ունեցող ԵԱՏՄ անդամ երկրներից ամենամեծ դրական զուտ հոսքերն ունի Ղրղզստանը, որը 2017թ. կազմել է գրեթե 2.0 մլրդ ԱՄՆ դոլար, երկրորդ տեղում է Հայաստանը (0.7 մլրդ ԱՄՆ դոլար) և երրորդ տեղում՝ Բելառուսը (0.2 մլրդ ԱՄՆ դոլար) (գծապատկեր 2):

Նշենք, որ 2015թ. Ռուսաստանից դեպի ԵԱՏՄ երկրներ դրամական փոխանցումների ծավալի կրճատումը պայմանավորված էր տնտեսական ճգնաժամով, որի արդյունքում, մի կողմից, կրճատվեցին Ռուսաստանում աշխատող միգրանտների աշխատավարձերը, իսկ մյուս կողմից, այդ երկրում գների աճի պատճառով վերջիններս սկսեցին իրենց եկամտից ավելի շատ գումար ուղղել սպառման, իսկ ավելի քիչ գումար՝ խնայողությանը: Արդյունքում կրճատվեցին աշխատանքային միգրանտների կողմից դեպի հայրենիք ուղարկվող դրամական միջոցները: Միաժամանակ պետք է փաստել, որ 2014-2016թթ. ընթացքում Ռուսաստանից ԵԱՏՄ այլ երկրներ կատարվող դրամական փոխանցումների ծավալի էական կրճատումը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ դրանք արտահայտված են ԱՄՆ դոլարով, որի նկատմամբ ռուսական ռուբլու փոխարժեքը տվյալ

ժամանակահատվածում նկատելիորեն անկում է գրանցել: Եթե հաշվի առնենք այն հանգանանքը, որ Ռուսաստանում աշխատանքային գործունեություն իրականացնող միգրանտներն իրենց աշխատավարձերը հիմնականում ստանում են ռուսական ռուբլիով, ապա Ռուսաստանից դեպի ԵԱՏՄ այլ երկրներ ուղղվող դրամական փոխանցումների իրական պատկերը հասկանալու համար ճիշտ կլինի դրանք արտահայտել ռուսական ռուբլիով: Աղյուսակ 3-ից երևում է, որ եթե 2014թ. ընթացքում Ռուսաստանից դեպի ԵԱՏՄ մնացած երկրներ կատարված դրամական փոխանցումների ծավալը 2013թ. համեմատ դոլարային արտահայտությամբ նվազել է (բացի Ղազախստանից), ապա ՌԴ ռուբլիով արտահայտված՝ ընդհակառակը, ավելացել է: Չնայած այն հանգամանքին, որ նախորդ տարվա համեմատ դոլարային արտահայտությամբ դրամական փոխանցումների նվազման ամենաբարձր տեմպերը գրանցվել են 2015թ. (Հայաստան՝ -39.3%, Բելառուս՝ -39.0%, Ղրղզստան՝ -32.9%, Ղազախստան՝ -10.9%), միևնույն է, ռուսական ռուբլիով արտահայտված դրանց նվազման տեմպերը Հայաստանում և Բելառուսում եղել են շատ ավելի քիչ (համապատասխանաբար՝ -3.1% և -2.6%), իսկ Ղազախստանում և Ղրղզստանում դրանք նույնիսկ գրանցել են աճ (համապատասխանաբար՝ 42.3% և 7.2%): Նույն միտումները պահպանվել են նաև 2016թ.:

Գծապատկեր 2. ԵԱՏՄ երկրների ֆիզիկական անձանց կողմից ԵԱՏՄ շրջանակներում կատարված դրամական փոխանցումների զուտ հոսքերը 2017թ. ընթացքում (մլն ԱՄՆ դոլար) (Գծապատկերը կազմվել է http://www.eurasiancommission.org/ru/act/integr_i_ makroec/dep_ stat/fin_stat/time_series/Pages/transfers.aspx էլեկտրոնային կայքի տվյալների հիման վրա)



ԵԱՏՄ-ին ինտեգրման արդյունավետության մակարդակի բարձրացման գործում այդ խմբավորման անդամ երկրներից դրամական փոխանցումների՝ որպես տնտեսության արտաքին ֆինանսավորման ուղիներից մեկի դերը գնահատելու համար ներկայացնենք այդ փոխանցումների և ԵԱՏՄ անդամ մյուս երկրներից ֆինանսական միջոցների ներգրավման այլ աղբյուրների՝ ուղղակի ներդրումների և արտահանումից ստացվող եկամուտների համեմատական վերլուծությունը: Ինչպես երևում է գծապատկեր 3-ից, Հայաստանում և Ղրղզստանում 2014-2017թթ. ընկած ժամանակահատվածում ԵԱՏՄ երկրներից դրամական փոխանցումների ծավալը մշտապես գերազանցել է ինտեգրացիոն խմբավորման անդամ գործընկեր երկրներից իրականացված ուղղակի ներդրումների և դեպի ԵԱՏՄ երկրներ կատարված արտահանման (հետևաբար՝ արտահանումից ստացված դրամական մուտքերի) ծավալները: Նույնիսկ վերջին տարիներին նշված երկրներից դեպի ԵԱՏՄ երկրներ արտահանման ծավալների աճի պարագայում, միևնույն է, դրամական փոխանցումների ծավալը շարունակում է զգալիորեն գերազանցել արտահանման ծավալներին: Ճիշտ է, եթե Հայաստանում 2014թ. ԵԱՏՄ երկրներից կատարված դրամական փոխանցումների և այդ երկրներ կատարված արտահանման ծավալների միջև եղած տարբերությունը կազմում էր 4.9 անգամ, որը հետագա տարիների աստիճանաբար կրճատվել է՝ 2017թ. կազմելով 2.0 անգամ, ապա Ղրղզստանում, ընդհակառակը, այն գնալով մեծացել է՝ 2014թ.-ի 3.4-ի փոխարեն 2017թ. հասնելով 4.5 անգամի: Դա նշանակում է, որ Ղրղզստանում դրամական փո-

խանցումների տարեկան աճի տեմպերը շարունակում են գերազանցել արտահանման աճի տեմպերին: Շատ ավելի մտահոգիչ է ԵԱՏՄ երկրներից Հայաստանում և Ղրղզստանում իրականացվող ուղղակի ներդրումների շարժընթացը, որը տարեցտարի գրանցում է նվազման միտում, ինչի արդյունքում այդ երկրներից կատարվող դրամական փոխանցումների և ուղղակի ներդրումների միջև ճեղքվածքն է՛լ ավելի է խորանում:

Աղյուսակ 3

Ֆիզիկական անձանց կողմից Ռուսաստանից դեպի ԵԱՏՄ անդամ երկրներ կատարված դրամական փոխանցումները (աղյուսակը կազմվել է http://www.eurasiancommission.org/ru/act/integr_i_makroec/dep_stat/fin_stat/time_series/Pages/transfers.aspx և էլեկտրոնային կայքի տվյալների հիման վրա) (ՌԴ ռուբլիով արտահայտված դրամական փոխանցումների ծավալը հաշվարկվել է հեղինակի կողմից http://www.eurasiancommission.org/ru/act/integr_i_makroec/dep_ stat/fin_stat/time_series/Pages/monetary.aspx էլեկտրոնային կայքի տվյալների հիման վրա)

Դեպի ԵԱՏՄ երկրներ	2013 (1 ԱՄՆ դոլար՝ 31.82 ՌԴ ռուբլի)		2014 (1 ԱՄՆ դոլար՝ 37.97 ՌԴ ռուբլի)		*Փոփոխությունը 2013թ. նկատմամբ, %*		2015 (1 ԱՄՆ դոլար՝ 60.66 ՌԴ ռուբլի)		*Փոփոխությունը 2014թ. նկատմամբ, %*		2016 (1 ԱՄՆ դոլար՝ 66.90 ՌԴ ռուբլի)		*Փոփոխությունը 2015թ. նկատմամբ, %*	
	մլն ԱՄՆ դոլար	*մլրդ ՌԴ ռուբլի*	*մլն ԱՄՆ դոլար*	*մլրդ ՌԴ ռուբլի*	*ԱՄՆ դոլար*	*ՌԴ ռուբլի*	*մլն ԱՄՆ դոլար*	*մլրդ ՌԴ ռուբլի*	*ԱՄՆ դոլար*	*ՌԴ ռուբլի*	*մլն ԱՄՆ դոլար*	*մլրդ ՌԴ ռուբլի*	*ԱՄՆ դոլար*	*ՌԴ ռուբլի*
Հայաստան	1,715.1	54.6	1,550.0	58.9	*-9.6*	*+7.8*	940.6	57.1	*-39.3*	*-3.1*	711.5	47.6	*-24.4*	*-16.6*
Բելառուս	399.0	12.7	377.6	14.3	*-5.4*	*+12.9*	230.2	14.0	*-39.0*	*-2.6*	262.8	17.6	*14.1*	*+25.9*
Ղազախստան	559.7	17.8	576.8	21.9	*+3.1*	*+23.0*	513.9	31.2	*-10.9*	*+42.3*	559.3	37.4	*8.8*	*+20.0*
Ղրղզստան	2,105.9	67.0	2,062.0	78.3	*-2.1*	*+16.8*	1,383.5	83.9	*-32.9*	*+7.2*	1,742.6	116.6	*26.0*	*+38.9*

Պատկերն այլ է ԵԱՏՄ անդամ մուս երկրներում՝ Բելառուսում, Ղազախստանում և Ռուսաստանում, որտեղ դեպի ԵԱՏՄ երկրներ իրականացվող արտահանումից ստացվող ֆինանսական մուտքերը զգալիորեն գերազանցում են այդ երկրներից ուղղակի ներդրումների և դրամական փոխանցումների ծավալները: Ընդ որում, եթե դիտարկվող ժամանակաշրջանում Ղազախստանում և Ռուսաստանում ԵԱՏՄ երկրներից դրամական փոխանցումների ծավալը մշտապես եղել է ավելի, քան ուղղակի ներդրումների ծավալը (2017թ. տվյալներով, Ղազախստանում՝ համապատասխանաբար 756 մլն ԱՄՆ դոլար և 512 մլն ԱՄՆ դոլար, Ռուսաստանում՝ համապատասխանաբար 2.4 մլրդ ԱՄՆ դոլար և 91 մլն ԱՄՆ դոլար), ապա Բելառուսում ԵԱՏՄ երկրներից դրամական փոխանցումները շարունակաբար եղել են ավելի քիչ, քան ուղղակի ներդրումները (2017թ. տվյալներով՝ համապատասխանաբար 460 մլն ԱՄՆ դոլար և 303 մլն ԱՄՆ դոլար):

Այսպիսով, Հայաստանում և Ղրղզստանում ԵԱՏՄ երկրներից իրականացված ուղղակի ներդրումների և նշված երկրների կողմից դեպի ԵԱՏՄ երկրներ կատարված արտահանման ծավալների համեմատ՝ դրամական փոխանցումներ ավելի մեծ ծավալները վկայում են այն մասին, որ Հայաստանի և Ղրղզստանի համար ԵԱՏՄ երկրներից դրամական փոխանցումները հանդիսանում են վերջիններիս հետ ինտեգրացիոն համագործակցության հիմնական ձևերից և շարժառիթներից մեկը: Մինչդեռ Բելառուսում, Ղազախստանում և Ռուսաստանում, ԵԱՏՄ շրջանակներում արտաքին դրամական միջոցների ներգրավման տեսանկյունից, արտահանումը շարունակում է մնալ խմբավորման անդամ երկրներից արտաքին ֆինանսավորման հիմնական աղբյուրը, ինչը նշանակում է, որ նշված երեք երկրների համար ԵԱՏՄ-ին ինտեգրման տնտեսական նպատակահարմարությունն առավել արդարացված է:

Գծապատկեր 3. ԵԱՏՄ երկրներից ներգրավված ուղղակի ներդրումների, ֆիզիկական անձանց կողմից ստացված դրամական փոխանցումների և դեպի ԵԱՏՄ երկրներ կատարված արտահանման ծավալների շարժընթացը ԵԱՏՄ երկրներում 2014-2017թթ. ընթացքում (մլն ԱՄՆ դոլար)
(Գծապատկերը կազմվել է http://www.eurasiancommission.org/ru/act/integr_i_makroec/dep_stat/union_stat/Pages/default.aspx տվյալների հիման վրա)



Ընդհանուր առմամբ, աշխատուժ արտահանող երկրների ՀՆԱ-ի վրա դրամական փոխանցումների ազդեցությունը տեղի է ունենում երկու հիմնական ճանապարհով՝ մի կողմից, սպառման (մանրածախ առևտրի), իսկ մյուս կողմից, խնայողությունների (ֆիզիկական անձանց բանկային ավանդների) և ներդրումների աճով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԵԱՏՄ երկրների շարքում դրամական փոխանցումները մեծ դերակատարում ունեն հատկապես Հայաստանում և Ղրղզստանում՝ գրաֆիկորեն համադրենք նշված երկրներում դրամական փոխանցումների, մանրածախ առևտրի, հիմնական կապիտալում բնակչության կողմից կատարված ներդրումների և ռեզիդենտ ֆիզիկական անձանց կողմից առևտրային բանկերում ներդրված ավանդային պորտֆելի շարժընթացը 2014-2017թթ. ընթացքում: Ինպես երևում է գծապատկեր 4-ից, Հայաստանում, բառառությամբ առևտրային բանկերում ներդրված ավանդների, վերը նշված մնացած բոլոր ցուցանիշներն ունեն միանման շարժընթացը, ինչը վկայում է մեր երկրում դրամական փոխանցումների, մանրածախ առևտրի, հիմնական կապիտալում բնակչության կողմից կատարված ներդրումների միջև կոռելացիոն կապերի առկայության մասին: Ընդ որում, ուսումնասիրվող ժամանակահատվածում դրամական փոխանցումների փոփոխություններին զուգահեռ՝ դինամիկ համանման փոփոխություններ գրանցվել են նաև Հայաստանի ՀՆԱ-ի մասով (գծապատկեր 5): Ինչ վերաբերում է Ղրղզստանին, ապա այստեղ չի կարելի փաստել դիտարկվող ցուցանիշների փոփոխությունների միանշանակ փոխկապակցվածության մասին: Այսպես, այդ երկրում 2015թ. դրամական փոխանցումների նվազումը, ճիշտ է, հանգեցրել է մանրածախ առևտրի ծավալների անկմանը, սակայն, բնակչության կողմից հիմնական կապիտալում ներդրումները շարունակել են աճել, ինչը, հավանաբար, պայմանավորված է այն հանգամանքով, որ ֆիզիկական անձանց կողմից նախորդ տարիներին ստացված հսկայածավալ դրամական փոխանցումներից կուտակած խնայողությունները իներցիոն կերպով շարունակել են ուղղվել տնտեսության մեջ նաև հաջորդ տարվա ընթացքում: Ղրղզստանում դրամական փոխանցումների, մանրածախ առևտրի, հիմնական կապիտալում բնակչության կողմից կատարված ներդրումների միավեկտոր շարժունություն գրանցվել է 2017թ. ընթացքում: Ի դեպ, հետաքրքրական է, որ 2014-2017թթ. ընթացքում Ղրղզստանում դրամական փոխանցումների և ՀՆԱ-ի համանման շարժընթացը պահպանվել է անընդհատորեն (գծապատկեր 5): Ինչ վերաբերում է առևտրային բանկերի՝ ռեզիդենտ ֆիզիկական անձնանց գծով ավանդային պորտֆելի շարժընթացին, ապա և՛ Հայաստանում, և՛ Ղրղզստանում դրանց ծավալն անընդմեջ աճում է՝ անկախ այդ երկրների կողմից ստացվող օտարերկրյա դրամական փոխանցումների՝ երբեմն արձանագրվող անկման միտումներից:

Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի, նախկին ԽՍՀՄ հանրապետությունների և Մոնղոլիայի տնտեսությունների վրա դրամական փոխանցումների ազդեցության էմպիրիկ հետազոտությունները վկայում են, որ այդ երկրներ ուղղվող դրամական փոխանցումների և վերջիններիս ֆինանսական համակարգի զարգացման միջև առկա է դրական կապ, ընդ որում՝ դրամական փոխանցումների ազդեցությունն առավել մեծ է ֆինանսական զարգացման վարկային, քան ավանդային ցուցանիշների վրա: Խնդիրն այն է, որ նշված երկրների (հատկապես նախկին ԽՍՀՄ հանրապետությունների) ֆինանսական ոլորտի ինստիտուցիոնալ թերզարգացվածությունը հանգեցնում է ավանդատուների վստահության մաարդակի նվազմանը: Արդյունքում, դրամական փոխանցումներ ստացողները, բնականաբար, չեն ցանկանում ստացված դրամական միջոցները որպես ավանդ ներդնել բանկային ոլորտում՝ փոխարենը նախընտրելով դրանք ներդնել իրական ակտիվների մեջ: Այս դեպքում ձեռք բերված իրական ակտիվներն օգտագործվում են որպես ակնկալվող վարկերի ապահովման միջոց (գրավ), ինչն էլ, վերջին հաշվով, դրական ազդեցություն է թողնում ֆինանսական զարգացման վարկային (հատկապես՝ մասնավոր վարկավորման) ցուցանիշների վրա[1]: Մինչդեռ դրամական փոխանցումների ավանդային ներդրումները բանկային համակարգում կարող են նպաստել ոչ միայն ֆինանսաբանկա-

[1] Kakhkharov J., Remittances and financial development in transition economies // Discussion paper series, 2018-03, Griffith University, Griffith Business School, 2018, p. 24

յին համակարգի կայունության ամրապնդմանը, այլև ավանդային պորտֆելի աճի հաշվին՝ բանկերի կողմից սպառողական և, ամենակարևորը, բիզնես (ներառյալ՝ սկսնակ, արտահանման ուղղվածություն ունեցող, ներմուծմանը փոխարինող և տնտեսության աճը խթանող այլ ձեռնարկատիրական գործունեության) վարկավորման ծավալների ընդլայնմանը, ինչն էլ, իր հերթին, կհանգեցնի երկրի տնտեսության զարգացմանը: Այս առումով, կարևոր է պետության կողմից տնտեսության ինստիտուցիոնալ համակարգի կատարելագործմանն ու ավանդատուների վստահության մակարդակի բարձրացմանն ուղղված այնպիսի քաղաքականության մշակումն ու իրականացումը, որը կտանի ֆինանսական ենթակառուցվածքների կատարելագործմանը, բանկային համակարգի կայունության աճին և բնակչության ավանդային խնայողությունների ընդլայնմանը:

Գծապատկեր 4. Դրամական փոխանցումների, մանրածախ առևտրի, բնակչության կողմից հիմնական կապիտալում կատարված ներդրումների և ֆիզիկական անձանց կողմից առևտրային բանկերում ներդրված ավանդների մնացորդի շարժընթացը Հայաստանում և Ղրղզստանում 2014-2017թթ. ընթացքում (մլն ԱՄՆ դոլար)

(Գծապատկերը կազմվել է ԵԱՏՄ անդամ երկրների կենտրոնական բանկերի էլեկտրոնային կայքերի՝ https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx, https://www.nbrb.by/Publications/banksector/, https://nationalbank.kz/?docid=298&switch=russian, https://www.nbkr.kg/index1.jsp?item=124&lang=RUS, http://www.cbr.ru/statistics/UDStat.aspx?TblID=302-21, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի էլեկտրոնային կայքի՝ http://www.eurasiancommission.org/ru/act/integr_i_makroec/dep_stat/fin_stat/time_series/Pages/transfers.aspx, http://www.eurasiancommission.org/ru/act/integr_i_makroec/dep_stat/fin_stat/time_series/Pages/monetary.aspx և http://www.eurasiancommission.org/ru/act/integr_i_makroec/dep_stat/econstat/Pages/investments.aspx և «Статистический ежегодник Евразийского экономического союза»; Евразийская экономическая комиссия. М.: 2018, с. 303 ժողովածուի տվյալների հիման վրա)



Գծապատկեր 5. Դրամական փոխանցումների և ՀՆԱ-ի շարժընթացը Հայաստանում և Ղրղզստանում 2014-2017թթ. ընթացքում (մլն ԱՄՆ դոլար)
(Գծապատկերը կազմվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի էլեկտրոնային կայքի՝ http://www.eurasiancommission.org/ru/act/integr_i_makroec/dep_stat/fin_stat/time_series/Pages/transfers.aspx և «Статистический ежегодник Евразийского экономического союза»; Евразийская экономическая комиссия. М.: 2018, с. 144 ժողովածուի տվյալների հիման վրա)



Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ ԱՊՀ երկրներում կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ տնային տնտեսությունների կողմից դրամական փոխանցումների գերակշիռ մասն ուղղվում է սննդամթերքի և առաջին անհրաժեշտության ապրանքների ձեռքբերմանը, բնակարանային պայմանների բարելավմանը, երբեմն նաև երեխաների համար առավել որակյալ կրթության ապահովմանը, և շատ քիչ գումար է հատկացվում բիզնեսի մեջ ներդրումներ իրականացնելուն կամ բանկերում խնայողություններ կատարելուն, ինչը, մասնավորապես, պայմանավորված է այդ երկրներում ներդրումային ոչ բարենպաստ միջավայրով, համապատասխան ներդրումային հնարավորությունների բացակայությամբ և կորպորատիվ հատվածում ներդրումային գործիքներին ոչ բավարար չափով ծանոթ լինելու հանգամանքով[1], ապա կարծում ենք, որ ԵԱՏՄ երկրների (հատկապես՝ Հայաստանի և Ղրղզստանի) տնտեսությունների վրա դրամական փոխանցումների դրական ազդեցությունը մեծացնելու համար անհրաժեշտ է անդամ պետությունների կողմից խթանել դրանց ներդրումը ընտանեկան բիզնեսի կամ ՓՄՁ ոլորտներում՝ տրամադրելով հարկային և այլ արտոնություններ այնպիսի ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու դեպքում, որտեղ ներդրված միջոցները հանդիսանում են օտարերկրյա դրամական փոխանցումներից ստացված միջոցներ: Նման փորձ կիրառվում է աշխարհի շատ երկրներում: Այսպես, Հնդկաստանում նոր ստեղծվող բիզնեսի համար սարքավորումներ և հումք ներմուծելու դեպքում միգրանտներին տրվում են մաքսային արտոնություններ: Պակիստանում արտոնություններ են տրամադրվում նաև արտահանմանն ուղղված ձեռնարկություններում այդ դրամական միջոցները ներդնելու դեպքում: Մեքսիկայում գոյություն ունի «միգրանտների ասոցիացիաների» միջոցների ներգրավման համակարգ, որը հնարավորություն է տալիս դրամական փոխանցումներն ուղղել միգրանտների բնակավայրերի (քաղաքների և գյուղերի) ենթակառուցվածքների վերակառուցմանը: Շատ երկրներում (Մարոկո, Ինդոնեզիա, Ֆիլիպիններ) այդ միջոցները փոխադարձ շահավետու-

[1] Кунец О., Развитие и побочные эффекты денежных переводов мигрантов в странах СНГ: Украина. Научно-исследовательский отчет КАРИМ-Восток RR 2012/06, Robert Schuman Centre for Advanced Studies, San Domenico di Fiesole (FI): European University Institute, Италия, 2012, с. 8

թյան սկզբունքով ուղղվում են բնակարանային շինարարությանը[2]:

Այսպիսով, կարելի է նշել, որ դրամական փոխանցումները աշխատուժ արտահանող երկրներում հանդիսանում են տնտեսական զարգացման ինքնուրույն և կարևոր գործոն: Իսկ փորձը ցույց է տալիս, որ տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիոն խմբավորման շրջանակներում միգրանտների դրամական փոխանցումներն առավել արդյունավետ են ազդում ռեցիպիենտ երկրների ՀՆԱ-ի աճի և տնտեսության զարգացման վրա, եթե խմբավորման անդամ երկրների միջև առկա են սերտ տնտեսական կապեր և տնտեսությունների փոխլրացման բարձր մակարդակ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Кунец О., Развитие и побочные эффекты денежных переводов мигрантов в странах СНГ: Украина. Научно-исследовательский отчет КАРИМ-Восток RR 2012/06, Robert Schuman Centre for Advanced Studies, San Domenico di Fiesole (FI): European University Institute, Италия, 2012, 64 с. [Kunets O., Razvitie i pobochnie effekti denejnikh perevodov migrantov c stranakh SNG: Ukraina. Nuchno-issledovatelskiy otchet KARIM-Vostok RR 2012/06, Robert Schuman Centre for Advanced Studies, San Domenico di Fiesole (FI): European University Institute, Italiya, 2012, 64 s.] [In Russian]
2. Мегатренды: Основные траектории эволюции мирового порядка в XXI веке: Под ред. Т.А. Шаклеиной, А.А. Байкова. 2-е изд., испр. и доп. М.: Издательство «Аспект Пресс», 2014, 449 с. [Megatrendi: Osnovnie traektorii evolyutsii mirovogo poryadka v XXI veke: Pod red. T.A. Shakleinoy, A.A. Baykova. 2-e izd., ispr. i dop. M.: Izdatelstvo «Aspekt Press». 2014, 449 s.] [In Russian]
3. Статистический ежегодник Евразийского экономического союза. Евразийская экономическая комиссия. М.: 2018, 420 с. [Statisticheskiy ejegodnik Evraziyskogo ekonomicheskogo soyuza. Evraziyskaya ekonomicheskaya komissiya. M.: 2018, 420 s.] [In Russian]
4. Трудовая миграция, денежные переводы и человеческое развитие в странах Центральной Азии. (Серия аналитических записок по человеческому развитию для стран Центральной Азии). Eurasian Development Bank, UNDP, 2015, 81 с. [Trudovaya migratsiya, denejnie perevodi i chelovecheskoe razvitie v stranakh Tsentralnoy Azii. (Seriya analiticheskikh zapisok po chelovecheskomu razvitiyu dlya stran Tsentralnoy Azii). Eurasian Development Bank, UNDP, 2015, 81 s.] [In Russian]
5. Kakhkharov J., Remittances and financial development in transition economies // Discussion paper series, 2018-03, Griffith University, Griffith Business School, 2018, pp. 31 p.
6. https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx
7. http://www.cbr.ru/statistics/UDStat.aspx?TblID=302-21
8. http://www.eurasiancommission.org/ru/act/integr_i_makroec/dep_stat/econstat/Pages/investments.aspx
9. http://www.eurasiancommission.org/ru/act/integr_i_makroec/dep_stat/fin_stat/time_series/Pages/transfers.aspx
10. http://www.eurasiancommission.org/ru/act/integr_i_makroec/dep_stat/fin_stat/time_series/Pages/monetary.aspx
11. http://www.eurasiancommission.org/ru/act/integr_i_makroec/dep_stat/union_stat/Pages/default.aspx
12. http://www.eurasiancommission.org/ru/act/integr_i_makroec/dep_stat/econstat/Pages/national.aspx
13. https://www.nbrb.by/Publications/banksector/
14. https://nationalbank.kz/?docid=298&switch=russian
15. https://www.nbkr.kg/index1.jsp?item=124&lang=RUS

[2] Мегатренды: Основные траектории эволюции мирового порядка в XXI веке: Под ред. Т.А. Шаклеиной, А.А. Байкова. – 2-е изд., испр. и доп. – М.: Издательство «Аспект Пресс», 2014, сс. 137-138